«ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ + ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ

Թիվ 23051701
17 մայիսի 2023թ.

«ԲԻ-ԴԻ-Օ ԸԴՎԱՅԶՈՐԻ» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Վ. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
/ ՀՀ, ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, 5-րդ հարկ/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Սահակյան

«Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» ՓԲԸ-ն, գործելով «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» փակ ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդի անունից և Բի-Դի-Օ ըդվայզորի ՓԲ ընկերության միջև 2023 թվականի հունվարի 17-ին կնքված «ՁՊՀՆԿ-ԳՀԾՁԲ-23/1 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ակտիվների գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

30.01.2023թ. կնքված թիվ 1 Համաձայնագրի համաձայն՝ նշված Պայմանագիրը մտել է ուժի մեջ, իսկ ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 2023թ. փետրվարի 20-ը:

Պատվիրատուն Հիմք ընդունելով Բի-Դի-Օ ըդվայզորի ՓԲ ընկերության 15.02.2023թ. թիվ CO 009-23 գրությամբ ներկայացված հիմնավորումը, որ ծառայության մատուցման ընթացքում իհայտ են եկել նոր հանգամանքներ, որոնց հետևանքով ծառայությունների մատուցման ամբողջական, պատշաճ և որակով իրականացման համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, որը կպահանջի լրացուցիչ միջոցներ Պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, ինչպես նաև լրացուցիչ ժամանակ, 20.02.2023թ.կողմերի միջև ստորագրվել է լրացուցիչ համաձայնագիր /Համաձայնագիր 2/, որով ընկերությանը տրվել է 20 օր լրացուցիչ ժամանակ, այսինքն մինչև ս.թ. մարտի 13-ը, ինչպես նաև Պայմանագրի գինն ավելացվել է 10 տոկոսի չափով:

Պայմանագրով Պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի տեխնիկական բնութագրիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետի պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելտ էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հարկ է նշել նաև, որ Կատարողի կողմից աշխատանքներն իրականացվել են դանդաղ տեմպերով և մինչ օրս չի տրամադրվել վերջնական հաշվետվությունը՝ չնայած Պայմանագրի ժամկետի երկարաձգմանը: Ավելին, Պատվիրատուի դիտարկմանը մասնակի կատարված աշխատանքի արդյունքների մի մասը առաջին անգամ տրամադրվել են սահմանված ժամկետից ավելի ուշ, իսկ ամբողջական աշխատանքի նախագծային տարբերակ ներկայացվել է միայն ս.թ. ապրիլ ամսին: Կատարողը մինչ օրս չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի տրամադրել անհրաժեշտ փաստաթուղթը:

Բացի այդ, համատեղ աշխատանքներում ի հայտ են եկել գնահատման իրականացման ընթացքում մեթոդաբանական ու մասնագիտական սկզբունքային անհամաձայնություններ, որոնք մեկնաբանման դաշտ չունեն:

Հաշվի առնելով ծառայություն մատուցողի կողմից Պայմանագրի վերը նշված էական պայմանների խախտումները, սկզբունքային հարցերով առաջացած անհամաձայնությունները, ինչպես նաև այն, որ հաշվետվությունը անհրաժեշտ է Ֆոնդի բնականոն գործունեության համար, առկա են օրենսդրորեն ամրագրված իրավական հիմքեր, որ Բի-Դի-Օ ըդվայզորի ՓԲ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է 2023 թվականի հունվարի 17-ին կնքված «ՁՊՀՆԿ-ԳՀԾՁԲ-23/1պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 4.2 և Հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Կատարողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները (990000 ՀՀ դրամ որակավորման ապահովում և 660000 ՀՀ դրամ պայմանագրի ապահովում) Պատվիրատուի՝ Ամերիաբանկ ՓԲԸ-ի N 1570073556030100 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում 2023 թվականի հունվարի 17-ին կնքված N ՁՊՀՆԿ-ԳՀԾՁԲ-23/1 պայմանագրի շրջանակներում 30.01.2023թ. ներկայացված՝ պայմանագրի ապահովման տուժանքի մասին համաձայնագրով և որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները փոխանցել վճարման պահանջագրերով սահմանված Պատվիրատուի /Շահառուի/ հաշվեհամարին, իսկ վճարման հանձնարարականների բնօրինակները ներկայացնել Պատվիրատուին: Նշված առաջարկը կատարելու պարագայում Կատարողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Հարգանքով՝

ԲԵԼԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ